Երևանում ցեղասպանության հուշակոթողին խոնարհած ծաղիկներ © Serouj Ourishian/Wikimedia/CC BY-SA 3.0

28.04.2021

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ. ՇՎԵՅՑԱՐԻԱՆ ԽՈՒՍԱՓՈՒՄ Է ՀՍՏԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ

Առաջին համաշխարհային պատերազմում հայերի դեմ հրեշավոր ռազմական հանցագործությունը Ջո Բայդենը ճանաչել է որպես ցեղասպանություն, Բեռնը՝ (դեռ) ոչ:

Ամալյա վան Գենթ

Ջո Բայդենը մտածված կերպով էր ընտրում իր խոսքերը, երբ կործանված Օսմանյան կայսրությունում հայերի դեմ պատերազմական հանցագործությունը նա՝ որպես ԱՄՆ-ի առաջին նախագահ, ճանաչեց իբրև ցեղասպանություն. առաջին համաշխարհային պատերազմի ոճրագործությունների հիշատակի 106-րդ օրվա կապակցությամբ Բայդենի հաղորդման մեջ ասվում էր, որ ամերիկացի ժողովուրդը հիշում է բոլոր նրանց, ովքեր «զոհվել են օսմանյան դարաշրջանում՝ հայերի ցեղասպանության ժամանակ»: Բայդենը հայտարարեց, որ ԱՄՆ-ն իրեն պարտավորված է զգում արգելել, որպեսզի նման ռազմական հանցագործություններ երբևէ կրկին տեղի չունենան: Հարգեք ցեղասպանության զոհերին, ասաց ԱՄՆ նախագահը, «որպեսզի պատահածի սարսափները երբեք չանհետանան պատմությունից»:

Ցեղասպանությունը սկսվեց 1915 թ. ապրիլի 24-ին Օսմանյան իշխանությունների կողմից այն ժամանակվա Կ. Պոլսում (այսօր՝ Ստամբուլ) հայ մտավորականների և համայնքների ղեկավարների ձերբակալությամբ: Դրան հաջորդած ամիսներին աքսորվեցին, կոտորվեցին կամ ոչնչացման արշավով մահվան հասցվեցին շուրջ 1.5 միլիոն հայեր: Պատմաբանների գերակշիռ մեծամասնությունն այժմ գրեթե չի վիճարկում, որ այս հանցագործության

պարագայում խոսքը Առաջին համաշխարհային պատերազմի ստվերում Օսմանյան կայսրության երիտթուրքական ղեկավարության համակարգված ոչնչացման քաղաքականություն մասին էր, որ դրա չափը և հետևանքները համեմատելի են միայն հետագայի՝ հրեա ժողովրդի Հոլոքոստի չափի ու հետևանքների հետ: Այսուամենայնիվ, ի տարբերություն Հոլոքոստի՝ կառավարությունները, նույնապես Շվեյցարիայի Դաշնային խորհուրդը, մինչ այժմ խուսափել են հայերի դեմ ուղղված հանցագործությունը շեշտակիորեն աստիճանավորել որպես ցեղասպանություն: Ազդեցիկ Թուրքիայի՝ Օսմանյան կայսրության իրավահաջորդի դիմադրությունը մինչ այժմ հսկայական էր:

Խիստ ժխտողական քաղաքականություն

1923 թ., իր հիմնադրման օրվանից, Թուրքիայի Հանրապետությունը պարտադիր և հավաքականորեն ժխտել է և վանել «Հայկական հարցը»: Նախ և առաջ հանրապետության հիմնադիր Քեմալ Աթաթուրքն իր երիտասարդ հանրապետությանը ցույց տվեց, թե ինչպես էր պետք գրել. նա նշեց, որ Թուրքիայի տարածքում հայերի զանգվածային սպանություններ երբեք տեղի չեն ունեցել, երբեք չեն կարող տեղի ունենալ: Եվ Թուրքիայի բոլոր կառավարությունները, առանց հարցուփորձ անելու, ընդունեցին այս դոկտրինը: «Հայկական հարցը» Թուրքիայում, ինչպես նաև համաշխարհային հանրության շրջանում տասնամյակներ շարունակ «թեմա» չէր համարվում: Միայն հայկական երիտասարդ պետությունն էր, որ 1991 թ., Խորհրդային միության փլուզումից հետո, արթնացրեց անցյալի արտամղված ուրվականներին և պատերազմական հանցագործության՝ որպես ցեղասպանություն ճանաչումը դնեց համաշխարհային քաղաքականության օրակարգում:

1991 թ. հետո Թուրքիան լուրջ տնտեսական և քաղաքական հետևանքներով և հարաբերությունների խզմամբ սպառնում էր երկրներին, որոնք թերևս պատրաստ էին ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Բացի այդ՝ ԱՄՆ-ում և ԵՄ-ում Թուրքիայի կառավարությունները հսկայական գումարներ էին ծախսում լոբբիստների համար՝ արտերկրում այդպիսի քայլը արգելակելու նպատակով և հետապնդում էին յուրաքանչյուր հակառակ ձայն երկրում: Հազարամյակի փոփոխության շեմին պետության կողմից որոշված երկաթե լռության քաղաքականության մեջ շրջադարձ նշագրեց անմիջականորեն Թուրքիայի այսօրվա նախագահը՝ Ռեջեփ Թայիփ Էրդողանը: Չնայած Էրդողանը նույնպես չէր ցանկանում իմանալ «ցեղասպանության» մասին: Նրա կառավարության օրոք, սակայն, հնարավոր դարձավ, որ, օրինակ, 2005 թ. հայ և թուրք գիտնականները Ստամբուլում մի խորհրդաժողովում առաջին անգամ քննարկեին հայերի ճակատագիրը կործանված Օսմանյան կայսրությունում: Ավելի ուշ՝ 2009 թ. ապրիլին, Շվեյցարիայի միջնորդությամբ, ակտիվ խաղաղ քաղաքականության նպատակով, Էրդողանի ղեկավարությամբ տեղի ունեցան քննարկումներ Թուրքիայի և Հայաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման շուրջ: Դրանք հանգեցրին մի ամբողջ շարք արձանագրությունների ստորագրմանը, որոնք նպատակաուղղված էին երկկողմ բարդ հարաբերությունների նորմալացմանը (այդ մերձեցումը ձախողվեց Հայաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի ազգայնական շրջանակների դիմադրության հետևանքով):

Հետաքրքրականորեն նորից Էրդողանն էր, որ վերջ տվեց այդ ձնհալին, երբ 2016 թ. հեղաշրջման ձախողված փորձից հետո նա դաշինք կազմեց ռասիստական, աջակողմյան ազգայնական MHP (թուրք՝ Milliyetçi Hareket Partisi, հայերեն՝ «Ազգայնական շարժում կուսակցություն») կուսակցության և ձախ-ազգայնական քաղաքական գործիչ Դողու Փերինչեքի հետ: MHP-ի նախագահներ Դեվլեթ Բահչելին և Դողու Փերինչեքը մերժում են 1915–1918 թթ. իրադարձությունների վերաբերյալ նույնիսկ ամենաճնշող պատմական ապացույցները՝ որպես «միջազգային իմպերիալիստների սուտ»: Անկարայի սցենարին

ծանոթներն ասում են, որ այսօր երկու քաղաքական գործիչներն են հիմնականում որոշում Թուրքիայի արտաքին քաղաքականությունը: Որպես ծայրահեղ ազգայնականներ՝ Լեռնային Ղարաբաղի վերջին պատերազմում երկուսն էլ ապավինել են Ադրբեջանի և Թուրքիայի սերտ ռազմական համագործակցությանը: Նրանց ազդեցության պատճառով ոչ վաղ անցյալում Հայկական հարցում Թուրքիան ուղղությունը փոխեց կրկին դեպի խիստ ժխտողական քաղաքականություն:

Անկարայի ազդեցության կորուստը Վաշինգտոնում

Սպիտակ տան հաղորդումից հետո Անկարայում բանավոր արձագանքները, համապատասխանաբար, տաքարյուն էին. Թուրքիայի արտգործնախարար Մևլութ Չավուշօղլուն դատապարտեց Բայդենի հայտարարությունը որպես «քաղաքական պատեհապաշտություն». «Մենք չպետք է թույլ տանք, որ որևէ մեկը մեզ սովորեցնի մեր սեփական անցյալի մասին»: Թուրքիայի կապի գրասենյակի տնօրեն Ֆահրեթին Ալթունը հայտարարեց, որ ԱՄՆ-ի նախագահի «պատմականորեն ոչ ստույգ արտահայտությունները» «անվավեր են» Անկարայի համար: Միայն մեկ կուսակցություն՝ ձախ քրդամետ HDP-ն (թուրք.՝ Halkların Demokratik Partisi, հայերեն՝ «Ժողովուրդների դեմոկրատական կուսակցություն»), երկրին պատմական արդարությանը հանձնվելու կոչ արեց: «Հայերի ցեղասպանությունը տեղի է ունեցել այս երկրներում, և դրա հաշվետվությունը պետք է տեղի ունենա այս երկրներում», - ասվում էր HDP-ի հայտարարության մեջ: Ավելի ուշ կուսակցությունը ընդգծեց, որ խտրականությունն ու ատելության հիմքով հանցագործությունները Թուրքիայում առօրյա են դարձել, քանի որ «մեծ հանցագործությունը մինչ այժմ մնացել է չքավված»: HDP-ն նաև Թուրքիայում միակ կուսակցությունն էր, որ լիբերալ դիրք գրավեց այլ հակամարտությունների հանդեպ: Այնուամենայնիվ, կուսակցությանն այժմ սպառնում է արգելք:

Ընդդիմության մնացած մասը, հակառակը, միաձայն արձագանքեց Բայդենի կողմից ցեղասպանության ճանաչմանը. Քեմալ Քիլիչդարօղլուն՝ Քեմալ Աթաթուրքի հիմնադրած «Հանրապետական-ժողովրդական կուսակցության» (թուրք.՝ Cumhuriyet Halk Partisi, CHP) նախագահը, Վաշինգտոնի որոշումը որակեց որպես «ոչ ճիշտ, անտեղի և անարդար» և խոսեց ԱՄՆ-ի և Թուրքիայի ռազմավարական հարաբերությունների «անուղղելի վնասի» մասին: «Ազգայնական աջ-կենտրոնամետ կուսակցություն»-ից (թուրք.՝ İyi Parti, İyip) Մերալ Աքսեները նույնիսկ խոսեց «թուրք ազգի պատվի և արժանապատվության վրա լուրջ հարձակման մասին»: Աշխարհառազմավարական հարաբերությունների վնասումը նա նույնպես անխուսափելի համարեց:

Այնուամենայնիվ, փորձագետները համաձայն են, որ Անկարայի ավանդական սպառնացող պահվածքը հազիվ թե այսօր կարողանա ինչ-որ բանի հասնել: Օրինակ՝ “Media-Line” լրատվական գործակալությանը վերլուծաբան Քրիստինա Յովանովսկին գրում էր, որ ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը անվերկբայորեն ազդարարում է Անկարայի ազդեցության կորուստը Վաշինգտոնի վրա: «Էրդողանը քաղում է այն, ինչ ցանել է», - մեկնաբանեց նաև ամերիկացի դիտորդ Էդուարդ Ստաֆորդը «ahval» ինտերնետային հարթակում: «Էրդողանի կառավարության քաղաքականությունը Թուրքիային, վերջին հաշվով, մեկուսացրել է Վաշինգտոնում», - հաստատեց թուրք վերլուծաբան Այքան Էրդեմիրը: «Ի վերջո, Թուրքիան այլևս չունի ընկերներ, ովքեր Վաշինգտոնում հանդես կգան հօգուտ Անկարայի դիրքորոշման»:

Մոլար ենթադրությամբ, թե Թուրքիան նույնարժեք է աշխարհի մեծերին կամ առնվազն տարածաշրջանային չեզոք տերության է, Էրդողանը, առանձնապես 2016 թ. հետո, ավելի ու ավելի էր գործադրում անբարեխիղճ ուժային քաղաքականությունը: Առանց

խորհրդակցության՝ նա թույլ տվեց իր բանակին բազմիցս ներխուժել հարևան երկրներ և բացահայտորեն փորձեց ռազմադաշտերում, ինչպես Սիրիայում ու Լիբիայում և Արևելյան Միջերկրածովում, միմյանց դեմ խաղարկել մեծ տերություններ ԱՄՆ-ին ու Ռուսաստանին: ԱՄՆ-ի նախորդ նախագահ Դոնալդ Թրամփը, որին Էրդողանը անվանում էր «մտերիմ ընկեր», և որի հետ նա գրեթե ամեն շաբաթ խոսում էր հեռախոսով, Անկարայի տերերին համարեց «սառնարյուն» (“cool”) և ազատություն տվեց նրան: Բայց ԱՄՆ-ի նոր նախագահի պաշտոնավարության սկզբից դա փոխվել է: Բնութագրական է, որ պաշտոնը ստանձնելուց հետո 92 օր Ջո Բայդենը խուսափում էր իր թուրք գործընկեր Էրդողանի հետ հեռախոսային յուրաքանչյուր կապից: Հետո, երբ նա 93-րդ օրը զանգահարեց, նա դա արեց առաջին հերթին Անկարային նախազգուշացնելու համար հայերի ցեղասպանությունը ճանաչելու վերաբերյալ իր հայտարարության մասին: Ամեն պարագայում, Բայդենը Էրդողանին խոստացավ հանդիպում՝ ՆԱՏՕ-ի՝ առաջիկա հունիսին ծրագրված գագաթնաժողովի շրջանակներում՝ երկկողմ հարաբերությունները բարելավելու համար:

«Էրդողանի ինքնավստահությունը բխում էր Թուրքիայի՝ անօտարելի աշխարհառազմավարական նշանակության երկարամյա համոզմունքից», - մեկնաբանեց թուրք ամենահայտնի լրագրողներից Չենգիզ Քանդարը: Նա նշեց, որ Թուրքիան այսօր, ակնհայտորեն, «այլևս չունի այն անօտարելի աշխարհառազմավարական նշանակությունը, որին հավատալու համար հոգ էին տանում նրա քաղաքականությունը որոշող անձինք և, այսպես, հավատացնում էին մնացյալ աշխարհին»:

Թեթևացում Երևանում

Հայաստանում Բայդենի հայտարարությունը թեթևություն առաջացրեց. Հայաստանի մայրաքաղաք Երևանում մարդկային զանգվածը հավաքվեց ԱՄՆ-ի դեսպանության շենքի առաջ՝ իր երախտագիտությունը հայտնելու Ջո Բայդենին «պատմական արդարության ճանապարհին հզոր քայլի համար»: «Հայաստանի Հանրապետության համար ցեղասպանության ճանաչումը ճշմարտության, պատմական արդարության և անվտանգության հարց է, առանձնապես վերջին տարվա ընթացքում մեր տարածաշրջանում տեղի ունեցած իրադարձությունների լույսի ներքո», - ասաց նաև վարչապետ Նիկոլ Փաշինյանը մի հայտարարության մեջ: Հունահայ Արաքսի Աքսելյանը խոսեց «ուրախության առաջին դոզայի մասին, որի խիստ կարիքն ունի մեր բարոյալքված և ապակողմնորոշված ժողովուրդը վերջին սեփ-սև ամիսներից հետո»: Վարչապետ Նիկոլ Փաշինյանի նման նա նույնպես 106 տարի առաջվա ցեղասպանության ճանաչումը կապեց ամենից առաջ այսօրվա Հայաստանի Հանրապետության անվտանգության հարցի հետ:

Շատ հայեր, լինի հարավկովկասյան Հանրապետությունում ապրող, թե ամենուր ցրված՝ սփյուռքում ապրող, Լեռնային Ղարաբաղի վիճելի շրջանի համար վերջին պատերազմը որպես տրավմա են ապրել. 44-օրյա զինված բախման ընթացքում միայն հայկական կողմից սպանվեց շուրջ 3500 զինվոր, ևս 11.000 մարդ հաշմանդամ դարձավ: Դա մարդկային կյանքի չափազանց բարձր գին է հազիվ թե 2.5 միլիոն բնակչությամբ փոքր երկրի համար: Պատերազմը, որը Ադրբեջանը շահել է թուրքական անօդաչու թռչող սարքերի և ռազմական խորհրդականների, ինչպես նաև Անկարայի կողմից վճարված սիրիացի վարձկանների շնորհիվ, Հայաստանին պարգևատրել է նվաստացուցիչ պարտությամբ ու նաև տնտեսապես կործանել է Հարավային Կովկասի ամենաաղքատ այդ հանրապետությունը: «Հայերի մեջ իշխում է տրամադրությունը, որ 100 տարի առաջ Թուրքիան ուզում էր մեզ բնաջնջել և մեզ անհետացնել երկրի երեսից», - ասաց Երևանում ապրող՝ «al-monitor» ինտերնետային պլատֆորմի հայազգի հետազոտող Ալին Օզինյանը, որը ծագումով Ստամբուլից է: Եվ. «Այսօր նրանք ուզում են նույնը անել, ուզում են մեզ բոլորիս սպանել»:

Ջո Բայդենը խոսք տվեց՝ ինքը ցանկանում է արգելել, որ նման անգութ արարք երբևէ կրկին տեղի չունենա: Պետք է պարզվի, թե արդյոք միայն այս խոստումը՝ որպես վախեցում, բավարար է և դրանով կարելի է երաշխավորվել Հայաստանի անվտանգությունը: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը Հայաստանին սպառնում է նոր պատերազմով: Իսկ Շվեյցարիա՞ն: Գուցե պատշաճ կլիներ, որ Դաշնային խորհուրդն այժմ ցեղասպանության պաշտոնական ճանաչման վճիռ կայացներ՝ հօգուտ ակտիվ խաղաղ քաղաքականության:

Աղբյուր՝ https://www.infosperber.ch/freiheit-recht/voelkermord-an-armeniern-schweiz-drueckt-sich-um-klartext/